

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Գործարարության աջակցման խորհրդի (ԳԱԽ) նախորդ 2008թ. նոյեմբերի 19-ի նիստի N 124-272(2) արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին**

1. (արձ. 6) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանին՝ ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 1-ին կետով սահմանված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների անվանացանկի փոփոխման և լրացման անհրաժեշտությունը, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում շարունակել աշխատանքները վերոհիշյալ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով առաջարկությունները ձևավորելու և հետագայում, սահմանված կարգով, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

Ընթացքը

ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 12-ին կայացած նիստի քննարկմանն է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդվածում լրացում կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը /կցվում է/ , որով փաստորեն ընդլայնվում է կազմակերպությունների կողմից ներմուծվող ապրանքների անվանացանկերը և մինչև 3 տարի ժամկետով հետաձգվում է դրանց ներմուծման դեպքում սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի վճարումը: Օրենքի նախագիծը ս/թ. փետրվարի 17-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից: Սակայն գործարար շրջանակներում օրինագծի քննարկումների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ներդրումային ծրագրերի խթանմանն ուղղված օրենսդրական փոփոխության կիրառմանը: Մասնավորապես՝

1. Օրինագծի «ՀՀ կառավարության սահմանված կարգով ընտրված ընկերությունների կողմից...» արտահայտությունը ըստ բառացի մեկնաբանության նշանակում է, որ Կառավարության կողմից սահմանված կարգը վերաբերելու է միայն ընկերությունների ընտրությանը: Սակայն հստակ է, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգը պետք է կարգավորի արտոնությունից օգտվելու ամբողջ ընթացակարգը, այն է՝ «ներդրումային փաթեթ» հասկացության սահմանումը, այդ փաթեթը ընդունող, գրանցող կամ հաստատող լիազոր մարմինը, ինչպես նաև այն հարցը, թե «300 մլն. դրամը» վերաբերում է արդյոք «ներդրումային փաթեթ»-ի շրջանակներում ներմուծվող սարքավորումների արժեքին, թե դա ամբողջական ներդրումային ծրագրի արժեքն է:

2. Առաջարկվում է օրինագծում իմպերատիվ ձևով սահմանել արտոնության տրամադրման ժամկետը՝ «մինչև 3 տարի» բառակապակցությունից հանելով «մինչև» բառը, քանի որ օրինագիծը տրամաբանական շարունակությունն է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1.1. հոդվածով սահմանված արտոնության՝ 1 տարի կամ 2 տարի՝ կախված

սարքավորումների արժեքից, Եթե ՀՀ պետական բյուջեի համալրման տեսանկյունից ընդունելի է «մինչև 3 տարի» սահմանումը, ապա ՀՀ կառավարության կողմից սահմանվող կարգի կարգավորման առարկա պետք է լինեն նաև արտոնության ժամկետը հստակ սահմանող լիազոր մարմնի սահմանումը և այն դեպքերը, որոնք անհրաժեշտ են արտոնության տվյալ ժամկետի տրամադրման որոշման համար:

3. Առաջարկվում է օրինագծում ավելացնել նաև այն ծածկագրերը /250510, 250900, 251820, 2836, 39162010, 76041090/, որոնք արդեն իսկ նախատեսված են գործող օրենքի 6.1.1. կետում և այդ ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում օրենքը սահմանում է արտոնություն` 1 տարի կամ 2 տարի:

4. Օրինագծով նախատեսված արտոնության կիրառումը իրագործելի կլինի, եթե գործող մաքսային օրենսդրության և ԱՏԳ ԱԱ ապրանքների դասակարգման հիմնական կանոններում կատարվեն փոփոխություններ, որը հնարավորություն կտա 300 մլն. և ավելի արժեք ունեցող ներդրումային ծրագրի շրջանակներում տարբեր ժամանակահատվածներում սարքավորումներ ներկրելու դեպքում /իսկ պրակտիկայում հաճախ են դեպքերը, երբ ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքում սարքավորումների միաժամանակյա ներմուծումը անհնար է` կախված տարբեր մատակարարների հետ աշխատանքից, սարքավորումների կոմպլեկտավորումից, բեռի ծավալից ելնելով տարբեր տրանսպորտային միջոցներով սարքավորումների առաքման անհրաժեշտությունից ու ժամանակահատվածից և այլն/ կիրառել ԱԱՀ-ի վճարման հետաձգման արտոնությունը յուրաքանչյուր խմբաքանակի համար` անկախ տվյալ խմբաքանակի սահմանին հասնելու արժեքից, եթե այն ներառված է ներդրումային փաթեթում, քանի որ ներկայումս գործող ընթացակարգերի համաձայն ապրանքների դասակարգումն իրականացվում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի համար առանձին` ըստ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի:

2. (արձ. 7) ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին` ընդունելով ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի և «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունները, մեկ շաբաթյա ժամկետում, կրկին անգամ Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվում է համապատասխանեցնել ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահի և ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման պահի որոշման սկզբունքները (առաջարկվում է երկու դեպքում էլ կիրառել հաշվառման հաշվեգրման մեթոդը):

Ընթացքը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ԵՎԲԱԽ-ի քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվում է համապատասխանեցնել ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահի եւ ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման պահի որոշման սկզբունքները (առաջարկվում է երկու դեպքում էլ կիրառել հաշվառման հաշվեգրման մեթոդը): ԵՎԲԱԽ-ի նիստում նախագիծը քննարկվել է, եւ որոշում է կայացվել նախագծով առաջարկվող լուծումներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի շրջանակներում:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը, որով նույնպես համապատասխանեցվել են ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության ծագման պահի եւ ավելացված արժեքի հարկի գծով հաշվանցումներ կատարելու իրավունքի ստացման պահի որոշման սկզբունքները (նշված երկու դեպքերի համար էլ առաջարկվում է կիրառել հաշվառման հաշվեգրման մեթոդը):

3. (արձ. 10) ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին` ընդունելով ի գիտություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունը պետության և հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված պարտավորությունների չկատարման դեպքում նույնական մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտության մասին, քննարկել 2010թ.-ից սկսած ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման կամ ետ վերադարձման ուշացման դեպքում պետության կողմից վճարման ենթակա տույժերի և հարկ վճարողների կողմից հարկերի վճարումն ուշացնելու համար վճարման ենթակա տույժերի չափերը համապատասխանեցնելու հնարավորության հարցը և առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին:

Ընթացքը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվում է ներդնել գերավճարների հետ վերադարձն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում պետության կողմից հարկ վճարողին համապատասխան տույժեր վճարելու ընթացակարգ:

4. (արձ. 11) Ընդունել ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի առաջարկությունը` ավելացված արժեքի հարկի օրենքի հավելված 1-ի 22-րդ կետի համաձայն օրենքով սահմանված կարգով կատարված հաշվանցումների (հարկային մարմնի կողմից հաշվառվող բոլոր հարկային պարտավորությունների մարման) արդյունքում առաջացած հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդը հարկ վճարողի ցանկությամբ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունների

մարմանն ուղղելու ընթացակարգերը ՀՀ կառավարության կողմից սահմանելու անհրաժեշտության և հրատապության մասին:

Ընթացքը

ՀՀ ֆինանսների նախարարությունը նպատակահարմար է համարում «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի 22-րդ կետով սահմանված՝ հարկային մարմնի կողմից հաշվառվող բոլոր հարկային պարտավորությունների մարման արդյունքում առաջացած հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մնացորդը հարկ վճարողի ցանկությամբ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմիններին վճարման ենթակա հարկերի գծով պարտավորությունների մարմանն ուղղելու ընթացակարգերի կատարելագործումը: Միաժամանակ, գտնում է, որ հրատապության առումով նպատակահարմար է բարձրացված հարցին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի շրջանակներում:

5. (արձ. 12) ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին՝ ընդունելով ի գիտություն «Էլեկտրասարք» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Զ. Հարությունյանի և «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ, ներկայացնել առաջարկություն հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումար հաշվանցման դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում նաև՝ հարկ վճարողի բանկային հաշիվների արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու նպատակահարմարության վերաբերյալ:

Ընթացքը

Հարկ վճարողի մոտ այլ հարկատեսակների հաշվին գերավճարի գումարը հաշվանցելու դիմումի առկայության պայմաններում, նախքան օրենքով սահմանված կարգով այդ դիմումի հիման վրա ուսումնասիրության անցկացումը, դիմումում նշված՝ հաշվանցման ենթակա գումարի մասով հարկային պարտավորությունների գանձումից (այդ թվում՝ հարկ վճարողի բանկային հաշիվների վրա արգելանք դնելու միջոցով) ձեռնպահ մնալու ընթացակարգի ներդրումը ՀՀ ֆինանսների նախարարությունը համարում է նպատակահարմար:

6. (արձ. 13) ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետ, գործարարության աջակցման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի հաղորդումն այն մասին, որ շահութահարկի գծով 1% կանխավճարների համակարգի փոփոխության հարցը ապագայում գտնվելու է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում՝ ներկայացնել առաջարկություն շահութահարկի գծով 1% կանխավճարների համակարգի վերացման ժամկետի հարցը օրենսդրորեն սահմանելու հնարավորության վերաբերյալ:

## Ընթացքը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից մշակվել է շրջանառության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագիծը, որով շահութահարկի նվազագույն գումարի կիրառությունն այլևս նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը տեղեկացնում է, որ շահութահարկի նվազագույն գումարը կիրառությունից կհանվի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի ընդունմամբ:

7. (արձ. 16) «Հայաստանի Բանկերի Միություն» իրավաբանական անձանց միության նախագահ Է. Սողոմոնյանին՝ բանկերի միության կողմից բանկային համակարգում ավելացված արժեքի հարկի կիրառման գործընթացում ծագած խնդիրների վերաբերյալ անցկացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա ամփոփել գործընթացի բարելավման ուղղված առաջարկությունների փաթեթը և ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդի քննարկմանը:

## Ընթացքը

Հայաստանի Բանկերի Միությունն ամփոփել է ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից բարձրացված հարցադրումներից կարևորագույնները և պատրաստել է օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ և ներկայացրել ԳԱՄ-ի քարտուղարությանը, որոնց իրականացումը հնարավորություն կտա զգալիորեն նվազեցնել բանկերի կողմից տնտեսությանը և բնակչությանը տրամադրվող վարկերի վերադարձելիության հետ առնչվող ռիսկերը, առավել ակտիվորեն գործել վարկավորման շուկայում և խթանել Հայաստանի տնտեսական առաջընթացը: Առաջարկությունների փաթեթի քննարկումը ներառված է սույն նիստի օրակարգի 5-րդ հարցում:

8. (արձ. 17) ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանին՝ լսելով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Արզումանյանի առաջարկությունները հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների խրախուսման համակարգը հարկային և մաքսային օրենսդրության և վարչարարության կատարումը ճշգրիտ պահպանելու հետ փոխկապակցելու, հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների վարձատրության պատշաճ մակարդակը ապահովելու, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարար, գործարարության աջակցման խորհրդի անդամ Տ. Դավթյանի հաղորդումը՝ 2009թ.-ին ՀՀ կառավարության կողմից հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների վարձատրության բարձրացումը նախատեսելու վերաբերյալ, ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ քննարկել հարկային մարմինների նյութական խրախուսման ֆոնդի եկամուտների և հարկային իրավախախտումների արդյունքում պետական բյուջե հավաքագրված գումարների միջև գործող ուղղակի կապի վերացման հարցը և առաջարկություն ներկայացնել Եկամուտների վարչարարության նոր մշակույթի ներդրման բարձրագույն խորհրդին:

Ընթացքը

*Հարկային մարմնի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտների եւ հարկային իրավախախտումների արդյունքում պետական բյուջե հավաքագրված գումարների միջեւ գործող ուղղակի կապի վերանայումը ՀՀ ֆինանսների նախարարությունը համարում է նպատակահարմար:*

9. (արձ. 21) Ընդունել ի գիտություն «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանի առաջարկությունն այն մասին, որ հարկային և մաքսային բարեփոխումների ինտենսիվ իրականացման, ինչպես նաև զլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում նպատակահարմար չէ և անհրաժեշտ է ժամանակավորապես հրաժարվել կազմակերպությունների հարկային հաշիվներին կալանք դնելու պրակտիկայից, ինչն էլ ավելի է վատթարացնում ձեռնարկությունների տնտեսական գործունեությունը, առաջացնում է ժամանակավոր գործազրկության և կոռուպցիոն ռիսկեր, էապես վնասում է հատկապես արտահանող կազմակերպությունների վարկանիշին, որոնք այժմ դժվարություններ են կրում ճգնաժամի պատճառով արտերկրյա գնորդների անվճարունակության կամ վճարումների ուշացումների հետևանքով:

Ընթացքը

*Ըստ գործարար միջավայրից և մասնավորապես՝ Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կողմից ստացված տեղեկատվության՝ իրավասու պետական մարմինների կողմից հարցին հնարավոր լուծում տալու ուղղությամբ որևէ քայլեր չեն ձեռնարկվել և շարունակվում է ձեռնարկությունների հաշիվներին կալանք դնելու պրակտիկան:*

**ԳԱԽ-ի քարտուղարություն**